Լրամշակված Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-769-30.01.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականության մշակման՝ ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ու կառավարման, ճանապարհների դասակարգման, տեխնիկական վիճակի գնահատման, գրանցման տնտեսական, իրավական եւ կազմակերպական հիմքերը, ճանապարհների նախագծման, շինարարության (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման), դրանց կահավորման ու պահպանման, հսկողության, վերահսկողության, ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ավտոմոբիլային ճանապարհների եւ թունելների անվտանգության աուդիտի իրականացման նկատմամբ հիմնական պահանջներն ու սահմանափակումները:».

2. 3-րդ մասում «նորոգման» բառը փոխարինել «միջին նորոգման (նորոգման)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում.

1. «օտարման շերտ» եւ «հողային պաստառ» հասկացությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«օտարման շերտ՝ հողատարածք (հողամասի նշանակությունից անկախ), որը նախատեսված է ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարրերի եւ ճանապարհային շինությունների (կառուցվածքների) տեղակայման համար: Ընդ որում՝ օտարման շերտը ընդգրկում է հողային պաստառը եւ հողային պաստառի զույգ կողմերից մեկ մետրի չափով հավելյալ գոտիները, իսկ ավտոմոբիլային ճանապարհների փոխհատումների եւ միացումների տեղերում՝ աջ շրջադարձերի թեւերի արտաքին եզրագծով տարածությունը՝ սահմանափակված մեկ մետր լայնությամբ պահպանիչ գոտիներով.

հողային պաստառ՝ օտարման շերտի այն տարածքը, որտեղ կատարվել են հողային աշխատանքներ, որն ընդգրկում է ճանապարհի երթեւեկային մասը, կողնակները կամ մայթերը, հեծանվային արահետները, լիցքի եւ հանույթի շեպերն ու կողային առուները.».

2. «արհեստական կառույցներ» հասկացության մեջ «եւ այլն» բառերը փոխարինել «եւ նմանատիպ այլ կառույցներ» բառերով.

3. «ճանապարհային ծառայություն» հասկացության մեջ «նորոգման» բառը փոխարինել «միջին նորոգման (նորոգման)», իսկ «ճանապարհային ծառայության շինություններ» հասկացության մեջ «նորոգմանը» բառը փոխարինել «միջին նորոգմանը (նորոգմանը)» բառերով.

4. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

«ճանապարհի կառուցում՝ ավտոմոբիլային ճանապարհի կամ դրա հատվածի շինարարության նպատակով իրականացվող տեխնոլոգիական, ենթակառուցվածքային եւ կառավարման գործընթացների ամբողջականություն.

ճանապարհի վերակառուցում՝ ճանապարհի շինարարական աշխատանքների ամբողջություն, որի ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքում փոխվում են ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների պարամետրերը, եւ որը հանգեցնում է ավտոմոբիլային ճանապարհի նշանակության եւ կարգի կամ դրանցից մեկի փոփոխությանը, կամ որի արդյունքում փոփոխվում են ճանապարհի օտարման շերտի չափերը.

ճանապարհի հիմնանորոգում՝ ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների կամ դրանց մասերի կառուցվածքային տարրերի փոխարինման կամ վերականգնման աշխատանքների ամբողջություն, որոնց իրականացմամբ պահպանվում են ճանապարհի համար նախկինում սահմանված նշանակության կամ կարգի պարամետրերը եւ տեխնիկական բնութագրերը, եւ որի իրականացման արդյունքում ապահովում են ճանապարհի հուսալիության եւ անվտանգության կառուցվածքային եւ այլ բնութագրերի պահանջները, եւ փոփոխության չեն ենթարկվում ճանապարհի օտարման շերտի չափերը.

միջին նորոգում (նորոգում)՝ ավտոմոբիլային ճանապարհների տրանսպորտային եւ գործառնական բնութագրերը վերականգնելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաեւ ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ, որոնց իրականացումը ազդեցություն չի ունենում ճանապարհի կառուցվածքային եւ այլ բնութագրերի հուսալիության եւ անվտանգության վրա.

ճանապարհների պահպանում՝ ավտոմոբիլային ճանապարհների, այդ թվում՝ ճանապարհի հողային պաստառի, արհեստական կառույցների, տրանսպորտային

հանգույցների, կահավորանքի եւ ինժեներական շինությունների առկա տեխնիկական վիճակի պահպանման, դրա տեխնիկական վիճակի գնահատման աշխատանքների ամբողջություն, որոնք համապատասխանում են անվտանգ եւ անխափան երթեւեկության ապահովման պահանջներին.

ճանապարհային տեխնոլոգիական կապ՝ ավտոմոբիլային ճանապարհների կապի համակարգ, որը ապահովում է ավտոմոբիլային ճանապարհների եւ արհեստական կառույցների շահագործման, նախագծման եւ կառուցման աշխատանքների գործառնական կառավարումը, որի հիմնական նպատակն է օպերատիվ տեղեկատվություն ստանալ ավտոմոբիլային ճանապարհների եւ արհեստական կառույցների, դրանց առանձին տարրերի աշխատանքի վիճակի մասին: Ճանապարհային տեխնոլոգիական կապի համակարգի մեջ մտնում են ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառի վիճակի եւ հիդրոօդերեւութաբանական պայմանների վերահսկման տեխնիկական, ռադիոհեռախոսային կապի, երթեւեկության հոսքերի վերահսկման տեխնիկական միջոցները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գործոնների մշտադիտարկման կայանները եւ արտակարգ իրավիճակների կանչի կետերը.

ճանապարհային ակտիվների կառավարման համակարգ՝ ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառույցների եւ դրանց կառուցվածքային տարրերի տվյալների հավաքագրման, կառավարման եւ վերլուծության համակարգ, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի պահպանման եւ զարգացման ծրագրերի կազմման եւ դրանց իրականացման բնականոն գործընթացը ապահովելու համար.

ճանապարհի տեխնիկական վիճակի գնահատում՝ ճանապարհների վերանորոգման միջոցառումների անհրաժեշտությունը որոշելու, ինչպես նաեւ ճանապարհի վիճակը հետագա շահագործման ընթացքում գնահատելու եւ կանխատեսելու նպատակով ճանապարհի եւ ճանապարհի արհեստական կառույցների կառուցվածքային տարրերի պարամետրերի եւ վիճակի, երթեւեկության հոսքերի բնութագրերի, տեղեկատվության ուսումնասիրություն, հավաքագրում եւ վերլուծություն.

ճանապարհային ենթակառուցվածք՝ ճանապարհային ֆիզիկական ակտիվների համակարգի ամբողջություն, որն ընդգրկում է ավտոմոբիլային ճանապարհի օտարման շերտը՝ իր մեջ ֆիզիկապես ներառված բոլոր տարրերով, արհեստական կառույցները, ճանապարհային կահավորանքը, ճանապարհային ծառայության շինությունները եւ ճանապարհային ինժեներական շինությունները,

ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարում՝ ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարելավմանն ուղղված գործողությունների ամբողջականություն, որը ներառում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության քաղաքականության իրականացումը, ճանապարհատրանսպորտային պատահարների եւ բնութագրերի,

ինչպես նաեւ երթևեկության խոցելի խմբերի վերաբերյալ քանակական եւ պարբերական հետազոտությունների իրականացումը, ճանապարհների անվտանգության վիճակի հսկողությունը եւ բարելավումը, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը, ճանապարհային անվտանգության նպատակային և պարբերական հետազոտությունների իրականացումը, ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացումը, ճանապարհային ցանցի անվտանգության ամբողջական գնահատման եւ անվտանգության մակարդակի գնահատման նպատակով հսկողության իրականացումը եւ ընթացիկ մշտադիտարկումը,

ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատում՝ ճանապարհային ցանցի անվտանգության ցուցանիշների համապատասխանության նկատմամբ նոր կառուցվող ճանապարհի անվտանգության ցուցանիշների կամ գործող ճանապարհային ցանցի անվտանգության ցուցանիշների էական փոփոխության ազդեցության համեմատական վերլուծություն,

ճանապարհային անվտանգության աուդիտ՝ ճանապարհի անվտանգության պահանջների համապատասխանության անկախ եւ օբյեկտիվ գնահատման գործընթաց, որը նախատեսված է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգությունն ու գործառնությունը (ֆունկցիոնալությունը) բարձրացնելու համար,

ճանապարհային անվտանգության վարկանիշ՝ գործող ճանապարհային ցանցում ընդգրված ճանապարհահատվածների անվտանգության չափանիշների դասակարգումն ըստ կարգերի

ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություն՝ ավտոմոբիլային ճանապարհների կամ դրանց հատվածների նպատակային հետազոտություն, որը պետք է բացահայտի ճանապարատրանսպորտային պատահարների առաջացման հնարավոր ռիսկը, նպաստող պայմանները, թերությունները եւ խնդիրները.

ճանապարհային անվտանգության պարբերական հետազոտություն՝ անվտանգության նկատառումներից ելնելով ճանապարհների կամ դրանց հատվածների անվտանգության համապատասխան մակարդակների ապահովման նպատակով պարբերաբար կատարվող հետազոտություն.

ճանապարհային երթեւեկության մասնակիցների խոցելի խումբ՝ հետիոտները, հեծանվորդները, երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձիք, ինչպես նաեւ շարժիչով աշխատող երկանիվ տրանսպորտային միջոցներից օգտվողները.

ճանապարհի վթարավտանգ հատվածներ՝ ավտոմոբիլային ճանապարհի վրա գտնվող վթարների կուտակման վայրեր կամ հատվածներ, որտեղ կենտրոնացած են եղել ճանապարհատրանսպորտային պատահարները, որոնք պատճառ են դարձել մարդկային զոհերի կամ վիրավորների.

ճանապահային անվտանգության տվյալների կառավարման համակարգ՝ ճանապատրանսպորտային պատահարների, ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով տուժած անձանց (զոհվածների եւ վիրավորների), ճանապարհային երթեւեկության բնագավառում վարչական իրավախախտումների, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհների տվյալների հաշվառման, պահպանման, վերլուծության, նույնականացման եւ մշտադիտարկման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ընդգրկում է ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների, ավտոմոբիլային ճանապարհների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարի ենթարկված տրանսպորտային միջոցների տվյալների եւ ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով անձանց առողջությանը վերաբերվող տվյալների շտեմարանները:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1. 6-րդ մասում «ապահովում են» բառերը փոխարինել «որոնք կարող են ապահովել» բառերով.

2. 8-րդ մասի «շրջանցները,» բառից հետո լրացնել «միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները իրար կապող ավտոմոբիլային ճանապարհները,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1. «ա», «դ» եւ «ե» կետերում «նորոգման ու պահպանման» բառերը փոխարինել «միջին նորոգման (նորոգման), պահպանման» բառերով.

2. «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ) իր իրավասության սահմաններում, սույն օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով կահավորանքին ներկայացվող պահանջներին համապատասխան, համաձայնություն է տալիս ճանապարհի առանձին տեղամասերում ճանապարհային կահավորանքի տեղադրման համար.»,

3. «է» կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4. լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ը-իե» կետերով.

«ը) հսկողություն է իրականացնում իր տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց երթեւեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման, միջին նորոգման (նորոգման) ու պահպանման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունների պայմանագրերի կատարման նկատմամբ.

թ) իր իրավասության սահմաններում ընդունում է ճանապարհային ենթակառուցվածքի եւ ճանապարհային անվտանգության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.

ժ) մշակում եւ հաստատում է իր տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի եւ դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների կարգը.

ժա) մշակում է ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման կարգը.

ժբ) իրականացնում է իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարումը, ճանապարհների տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքագրումը, վերլուծությունը: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարման, տվյալների հավաքագրման եւ վերլուծության իրականացման կարգը հաստատում է պետական ճանապարհային մարմինը.

ժգ) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներդրումային ծրագրեր՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքին համապատասխան.

ժդ) իրականացնում է ճանապարհային անվտանգության աուդիտորների որակավորումը.

ժե) ապահովում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը՝ սույն օրենքի, ճանապարհային անվտանգության ստանդարտների, շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի եւ ճանապարհային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան,

ժզ) ուսումնասիրում եւ վերլուծում է ճանապարհային երթեւեկության մասնակիցների խոցելի խմբի ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բնագավառում ի հայտ եկած կարիքները, ինչպես նաեւ ճանապարհային անվտանգության բարձրացման նպատակով երթեւեկության տարբեր մասնակիցների խմբերի վարքագծի բարելավման ուղղությամբ այլ իրավասու մարմինների հետ համատեղ մշակում եւ իրականացնում է կրթական եւ իրազեկման արշավներ,

ժէ) իրականացնում է ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը.

ժը) իրականացնում է ճանապարհային անվտանգության նպատակային և պարբերական հետազոտություններ եւ զննություն, եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում ճանապարհային ցանցի անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ,

ժթ) ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ապահովման նպատակով կազմում է ճանապարհային անվտանգության ռիսկերի վրա հիմնված առաջնահերթ գործողությունների տարեկան ծրագիր եւ իր իրավասության սահմաններում իրականացնում է ռիսկերի կրճատման միջոցառումներ,

ի) իրականացնում է թունելների անվտանգության գնահատումը, մշտադիտարկումը եւ այդ պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը,

իա) թունելների անվտանգության ապահովման նպատակով մշակում է վթարների արագ արձագանքման միջոցառումների ծրագիր,

իբ) սահմանում է թունելի վթարային իրավիճակի դեպքում դրանց շահագործումը անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու կարգը,

իգ) ապահովում է թունելների անվտանգության պարբերական փորձարկման եւ զննության իրականացումը, եւ դրանց արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն, ինչպես նաեւ առաջարկություններ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ:

իդ) ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշների հավաքագրման, դրանց հետեւանքով տուժած (մահացած եւ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացած) անձանց վերաբերյալ տվյալները հաշվառող, ինչպես նաեւ դրանց հաշվառման վիճակագրական տվյալների վերլուծությունն իրականացնող պետական շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ իրականացնում է ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկ եւ վերլուծություն: Ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների հավաքագրման, դրանց հետեւանքով կրած վնասի, միջին հանրային ծախսերի հաշվարկման եւ վերլուծության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

իե) սահմանում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները:»:

Հոդված 5. Օրենքի ամբողջ տեքստում «դրանց տնօրինողների» բառերը փոխարինել «ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողների» բառերով:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «ճանապարհների կառուցման» բառերից հետո լրացնել «, վերակառուցման» բառը:

Հոդված 7. Օրենքի 2-րդ գլխի, 7-րդ, 8-րդ եւ 16-րդ հոդվածների վերնագրերում, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ, 16.1-րդ եւ 19-րդ հոդվածներում, 13-րդ հոդվածի 3-րդ մասում, 15-րդ մասի «գ» եւ 16-րդ մասի «զ» կետերում «նորոգման» բառը եւ դրա հոլովումները փոխարինել «միջին նորոգման (նորոգման)» բառերով եւ դրանց հոլովումներով:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով.

«5. Միջազգային ճանապարհային ցանցի մաս հանդիսացող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց մաս հանդիսացող թունելների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 7-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «իրականացվում են ըստ գործող շինարարական նորմերի» բառերը փոխարինել «իրականացվում են նորմատիվ իրավական եւ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն» բառերով.

2. 3-րդ մասում «առնվազն 18 ամիս սպասարկման ժամկետով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված երաշխիքային ժամկետներում» բառերով.

3. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով.

«8. Ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ տարածքները ենթակա են օտարման «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման ենթակա ճանապարհաշինական ծրագրերի իրականացման դեպքում՝ ծրագրերի մշակման եւ նախապատրաստման փուլերում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է կիրառել ենթակառուցվածքային ծրագրերը ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների սոցիալական երաշխիքների քաղաքականությունը եւ դրա պահանջներին համապատասխան սահմանել տարաբնակեցման և փոխհատուցման սկզբունքները եւ շրջանակը, ինչպես նաեւ հողերի օտարման եւ տարաբնակեցման ծրագիրը:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1.1-ին մասի «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ) հեծանվորդների համար՝ մայթերով, կողնակներով եւ հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով, հեծանվորդների համար առանձնացված գոտիներով, իսկ դրանց բացակայության դեպքում երթեւեկելի մասի աջ եզրով:».

2. 6-րդ մասի «ա» կետում «ասֆալտբետոնե» բառից հետո լրացնել «, ցեմենտբետոնե» բառը, «ե» կետում «կողնակների» բառից առաջ լրացնել «երթեւեկելի մասի, բաժանիչ գոտու եւ» բառերը, իսկ «ը» կետում «նախագծումը» բառից հետո լրացնել «, շինարարությունը եւ շահագործումը» բառերը:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները ոռոգման առուներով, էլեկտրոնային հաղորդակցության եւ էլեկտրականության գծերով, խողովակաշարերով եւ այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով եւ երկաթուղագծերով հատման, ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտում ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողների հետ դրանց տեղադրման եւ վերատեղադրման համաձայնեցման կարգը, նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար նախատեսված դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցման, ինչպես նաեւ դրանք հեռահաղորդակցության օպերատորներին վարձակալությամբ տրամադրման կարգը եւ պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

2. 3-րդ մասում «դրանց սեփականատիրոջ հաշվին» բառերը փոխարինել «հաղորդակցուղու սեփականատիրոջ հաշվին, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ» բառերով.

3. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-8-րդ մասերով.

«5. Նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծերում ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցումը իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

6. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցումը իրականացվում է նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի հիմքով հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար կառուցված դիտահորերը, խրամուղիները, հենասյուները կամ դրանց հատվածները հեռահաղորդակցության օպերատորներին տրամադրվում են վարձակալությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հետ կնքելով վարձակալության պայմանագիր:

8. Կառուցված եւ վերակառուցված ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար նախատեսված դիտահորերի, խրամուղիների, հենասյուների առկայության դեպքում հեռահաղորդակցության օպերատորները հաղորդակցուղիները պետք է անցկանցնեն միայն դրանց միջով:»:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել.

2. 2-րդ մասի «ա» կետում «1-ին կարգի» բառերը փոխարինել «միջպետական նշանակության ավտոմոբիլային» բառերով, «բ» կետում «2-րդ եւ 3-րդ կարգի» բառերը փոխարինել «հանրապետական նշանակության ավտոմոբիլային» բառերով, իսկ «գ» կետում «4-րդ կարգի» բառերը փոխարինել «մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային», բառերով

3. 6-րդ մասում՝

ա. «պաշտպանական գոտիներում» բառերից հետո լրացնել «եւ բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում» բառերը.

բ. «ա» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա) կառուցել, վերակառուցել շենքեր եւ շինություններ, այդ թվում ինժեներական ենթակառուցվածքների հաղորդակցուղիներ, կատարել ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազննություններ, արդյունահանման աշխատանքներ.».

գ. «դ» կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

դ. լրացնել նոր «ե» ենթակետ հետեւյալ բովանդակությամբ.

«ե) կառուցել ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր մուտքեր եւ ելքեր:».

4. 7-րդ մասում «կառուցվածքները» բառից հետո լրացնել «՝ գործող շինարարական նորմերի պահանջներին համապատասխան» բառերը.

5. 8-րդ մասում «ցանկապատվի տեսանելի պարսպով եւ կահավորվի համապատասխան ճանապարհային նշաններով» բառերը փոխարինել «կահավորվի համապատասխան պաշտպանիչ, խոչընդոտող, պարսպող հարմարանքներով եւ ճանապարհային նշաններով» բառերով:

6. 11-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11. Անմիջական ճանապարհի հողային պաստառի վրայով կամ ճանապարհի օդային տարածքով, օտարման գոտիով ճանապարհային տեխնոլոգիական կապից եւ լուսավորումից բացի որեւէ այլ հաղորդակցուղու տեղադրումն արգելվում է,

բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բացառիկ դեպքերի:».

7. 12-րդ մասում «կապի» բառը փոխարինել «էլեկտրոնային հաղորդակցության» բառերով.

8. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 15.1-15.3 մասերով.

«15.1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային եւ ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման, վիճակի գնահատման, Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների եւ թունելների պահպանման աշխատանքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների եւ թունելների պահպանման մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները եւ պահպանման աշխատանքների ինքնարժեքի հաշվարկման մեթոդաբանությունը, կատարված աշխատանքների ընդունման կարգը, ինչպես նաեւ բնական աղետների կամ արտակարգ իրավիճակների դեպքում՝ հրատապ աշխատանքների իրականացման, գնահատման եւ աշխատանքների ընդունման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

15.2. Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման, ճանապարհների վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման) եւ պահպանության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման հեռանկարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցվող օբյեկտների ցանկը, նկարագիրը, առանձնահատկությունները եւ դրանց ներկայացվող պահանջները:

15.3. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտիներում կառուցապատման արդյունքում անհրաժեշտ ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի տեղադրումը իրականացվում է կառուցապատողի միջոցների հաշվին՝ կառուցապատվող օբյեկտի մոտով անցնող ճանապարհահատվածների երթեւեկության կազմակերպման գծապատկերները կամ երթեւեկության կազմակերպման սխեմաները նախապես համաձայնեցնելով պետական ճանապարհային մարմնի եւ երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ:»:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասում «հանրապետության քաղաքային համայնքներում նախատեսվող օբյեկտների համար պետական ճանապարհային մարմին են ներկայացնում քաղաքապետը, իսկ գյուղական համայնքներում կամ դրանցից դուրս՝ մարզպետը» բառերը փոխարինել «պետական ճանապարհային մարմին է ներկայացնում համապատասխան համայնքի ղեկավարը» բառերով:

2. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ավտոմոբիլային ճանապարհի պաշտպանական գոտում, ինչպես նաեւ բնակավայրի միջով անցնող հատվածներում շենքերի եւ շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային եւ գործառնական նշանակության փոփոխությունը, ինչպես նաեւ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի օտարումները, իրականացվում են օրենքով սահմանված կարգով: Ընդ որում՝ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի օտարման առաջարկությունները նախապես համաձայնեցվում են պետական ճանապարհային մարմնի եւ երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի հետ:»:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 19.1. Ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը եւ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը

1. Ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը իրականացնում է պետական ճանապարհային մարմինը: Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման արդյունքների հիման վրա իրականացվում են ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություններ՝ ճանապարհների վթարավտանգ հատվածների հայտնաբերման և բարելավման աշխատանքներ կատարելու նպատակով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները ենթակա են ճանապարհային անվտանգության ազդեցության պարտադիր գնահատման:

3. Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման գործընթացում պետք է հաշվի առնվեն ճանապարհային երթեւեկության խոցելի խմբերի ճանապարհից անվտանգ օգտվելու իրավունքները:

4. Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման, ճանապարհային ցանցի անվտանգության տվյալների կառավարման եւ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման չափանիշների սահմանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Պետական ճանապարհային մարմինը պետք է հասանելիություն ունենա երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման էլեկտրոնային համակարգի տվյալներին՝ բացառությամբ անձնական տվյալների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանման ենթական տվյալների:

6. Ճանապարհային անվտանգության տվյալների կառավարման համակարգի տվյալների հաշվառման, վերլուծության, մշտադիտարկման եւ գնահատման միջոցով իրականացվում են ճանապարհային անվտանգության քաղաքականության մշակման եւ բարելավմանն ուղղված միջոցառումներ:

7. Ճանապարային անվտանգության տվյալների կառավարման համակարգի ձեւավորման, վարման, տվյալների ինտեգրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությանբ կառավարությունը:

Հոդված 19.2. Ճանապարհային անվտանգության աուդիտը

1. Ճանապարհային անվտանգության աուդիտը հանդիսանում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման գործընթացի անբաժանելի մասը:

2. Ճանապարհային անվտանգության աուդիտն իրականացվում է ճանապարհաշինարարական ծրագրերի իրականացման բոլոր փուլերում՝ ճանապարհի նախագծումից մինչեւ ճանապարհի սպասարկման մեկ տարի երաշխիքային ժամկետը:

3. Ճանապարհային անվտանգության աուդիտորը ենթակա է պարտադիր որակավորման: Որակավորումը իրականացնում եւ վկայականը տրամադրում է պետական ճանապարհային մարմինը:

4. Ճանապարհային անվտանգության աուդիտոր կարող է լինել այն անձը, որը.

1) ունի ճանապարհների, կամուրջների, թունելների նախագծման, կամ ճանապարհային անվտանգության, կամ ճանապարհային երթեւեկության կազմակերպման ինժեների (ճարտարագետի) առնվազն հինգ տարվա փորձ,

2) պետական ճանապարհային մարմնի կողմից ստացել է որակավորման վկայական:

5. Ճանապարհային անվտանգության աուդիտ կարող է իրականացնել ֆիզիկական անձը կամ կազմակերպությունը:

6. Եթե ճանապարհային անվտանգության աուդիտն իրականացվում է կազմակերպության կողմից, ապա այդ կազմակերպության առնվազն երկու անդամ պետք է ունենան սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ որակավորման վկայականը:

7. Ճանապարհային անվտանգության աուդիտորը չի կարող ներգրավված լինել ճանապարհային անվտանգության աուդիտի ենթակա ավտոմոբիլային ճանապարհի նախագծման, հեղինակային եւ, տեխնիկական հսկողության, ինչպես նաեւ շինարարության իրականացման գործընթացներում:

8. Ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման կարգը, ճանապարհային անվտանգության աուդիտորի իրավունքները եւ պարտականությունները, ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորման պահանջները, վերապատրաստման իրականացման կարգը, որակավորման վկայականի տրամադրման կամ մերժման հիմքերը եւ ժամկետները, եւ լրացուցիչ աուդիտի նշանակման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19.3. Թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջները

1. Ճանապարհային երթեւեկության մասնակիցների անվտանգության ապահովման համար պետական ճանապարհային մարմինը՝ քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ, մշակում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները, որոնք պետք է ուղղված լինեն մարդկանց կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի եւ թունելների կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների համար հնարավոր վտանգ ներկայացնող դեպքերի կանխարգելմանը, ինչպես նաեւ պատահարների դեպքում անվտանգության ապահովմանը:

2. Թունելի անվտանգության նվազագույն պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է պետական ճանապարհային մարմինը, իսկ թունելների անվտանգության միջոցառումներն ապահովում է թունելի պահպանումն իրականացնող կապալառու կազմակերպությունը:

3. Պետական ճանապարահային մարմինը իրավասու է կասեցնելու կամ սահմանափակելու թունելների շահագործումը, եթե դրանք չեն բավարարում անվտանգության պահանջներին: Թունելների անվտանգության նվազագույն պահանջների ապահովման, թունելների անվտանգության կանխարգելման եւ պաշտպանական միջոցառումներ սահմանելու կարգը հաստատում է պետական ճանապարհային մարմինը:

4. Կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ շահագործման փուլերում գտնվող թունելների անվտանգության պահանջների պահպանման համար պատասխանատու է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված տվյալ թունելի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ շահագործման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունը:

5. Թունելներով երթեւեկող տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ թունելները շահագործող անձնակազմի անվտանգությունն ապահովելու նպատակով՝ կապալառու կազմակերպությունը յուրաքանչյուր թունելի համար նշանակում է թունելի անվտանգության գծով մեկ պատասխանատուի՝ նախապես համաձայնեցնելով պետական ճանապարհային մարմնի հետ:

6. Թունելների անվտանգության գծով պատասխանատուի որակավորման, նշանակման եւ պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Թունելների անվտանգության պարբերական փորձարկման եւ զննության իրականացումը, ինչպես նաեւ թունելներում տեղի ունեցած վթարների վերաբերյալ հաշվետվության ձեւը եւ ներկայացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Թունելների անվտանգության նվազագույն պահանջների համապատասխանությունը ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինը իրականացնում է պարբերական զննում:

9. Թունելի անվտանգության համապատասխան մակարդակները պահպանելու նպատակով իրականացվող երկու հաջորդական զննումների միջեւ ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի վեց տարին:»:

Հոդված 15. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերով.

«4. Սույն օրենքի 19.2-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված դրույթներն ուժի մեջ են մտնում՝ միջպետական նշանակության ճանապարհների մասով՝ 2026 թվականի հունվարի 1-ից, հանրապետական նշանակության ճանապարհների մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից, մարզային (տեղական) նշանակության ճանապարհների մասով՝ 2028 թվականի հունվարի 1-ից, իսկ 19.3-րդ հոդվածով սահմանված դրույթների մասով նոր կառուցվող ճանապարհային թունելների համար՝ 2024 թվականի հուլիսի 1-ից:

5. Մինչեւ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը կառուցված եւ շահագործման մեջ գտնվող միջազգային ճանապարհային ցանցի մաս հանդիսացող թունելների անվտանգության պահանջները ոչ ուշ քան մինչեւ 2027 թվականի հունվարի 1-ը պետք է համապատասխանեցվեն սույն օրենքի 19.3-րդ հոդվածով սահմանված դրույթներին:

6. Սույն օրենքի 19.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանապարհային անվտանգության ազդեցության առաջին գնահատումը պետք է իրականացվի մինչեւ 2029 թվականի հունվարի 1-ը:»:

Հոդված 16. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժ», «ժբ», «իբ», «իդ» և «իե» կետերով, 8-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածներով եւ 14-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 4-րդ մասով եւ 19.3 հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանչորս ամսյա ժամկետում, 14-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսյա ժամկետում, իսկ 14-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 7-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսունվեց ամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լրամշակված Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-769-30.01.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականության մշակման՝ ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ու կառավարման, ճանապարհների դասակարգման, տեխնիկական վիճակի գնահատման, գրանցման տնտեսական,

իրավական եւ կազմակերպական հիմքերը, ճանապարհների նախագծման, շինարարության (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման), դրանց կահավորման ու պահպանման, հսկողության, վերահսկողության, ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ավտոմոբիլային ճանապարհների եւ թունելների անվտանգության աուդիտի իրականացման նկատմամբ հիմնական պահանջներն ու սահմանափակումները:».

2. 3-րդ մասում «նորոգման» բառը փոխարինել «միջին նորոգման (նորոգման)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում.

1. «օտարման շերտ» եւ «հողային պաստառ» հասկացությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«օտարման շերտ՝ հողատարածք (հողամասի նշանակությունից անկախ), որը նախատեսված է ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարրերի եւ ճանապարհային շինությունների (կառուցվածքների) տեղակայման համար: Ընդ որում՝ օտարման շերտը ընդգրկում է հողային պաստառը եւ հողային պաստառի զույգ կողմերից մեկ մետրի չափով հավելյալ գոտիները, իսկ ավտոմոբիլային ճանապարհների փոխհատումների եւ միացումների տեղերում՝ աջ շրջադարձերի թեւերի արտաքին եզրագծով տարածությունը՝ սահմանափակված մեկ մետր լայնությամբ պահպանիչ գոտիներով.

հողային պաստառ՝ օտարման շերտի այն տարածքը, որտեղ կատարվել են հողային աշխատանքներ, որն ընդգրկում է ճանապարհի երթեւեկային մասը, կողնակները կամ մայթերը, հեծանվային արահետները, լիցքի եւ հանույթի շեպերն ու կողային առուները.».

2. «արհեստական կառույցներ» հասկացության մեջ «եւ այլն» բառերը փոխարինել «եւ նմանատիպ այլ կառույցներ» բառերով.

3. «ճանապարհային ծառայություն» հասկացության մեջ «նորոգման» բառը փոխարինել «միջին նորոգման (նորոգման)», իսկ «ճանապարհային ծառայության շինություններ» հասկացության մեջ «նորոգմանը» բառը փոխարինել «միջին նորոգմանը (նորոգմանը)» բառերով.

4. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

«ճանապարհի կառուցում՝ ավտոմոբիլային ճանապարհի կամ դրա հատվածի շինարարության նպատակով իրականացվող տեխնոլոգիական, ենթակառուցվածքային եւ կառավարման գործընթացների ամբողջականություն.

ճանապարհի վերակառուցում՝ ճանապարհի շինարարական աշխատանքների ամբողջություն, որի ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքում փոխվում

են ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների պարամետրերը, եւ որը հանգեցնում է ավտոմոբիլային ճանապարհի նշանակության եւ կարգի կամ դրանցից մեկի փոփոխությանը, կամ որի արդյունքում փոփոխվում են ճանապարհի օտարման շերտի չափերը.

ճանապարհի հիմնանորոգում՝ ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների կամ դրանց մասերի կառուցվածքային տարրերի փոխարինման ~~եւ (կամ)~~ կամ վերականգնման աշխատանքների ամբողջություն, որոնց իրականացմամբ պահպանվում են ճանապարհի համար նախկինում սահմանված նշանակության կամ կարգի պարամետրերը եւ տեխնիկական բնութագրերը, եւ որի իրականացման արդյունքում ապահովում են ճանապարհի հուսալիության եւ անվտանգության կառուցվածքային եւ այլ բնութագրերի պահանջները, եւ փոփոխության չեն ենթարկվում ճանապարհի օտարման շերտի չափերը.

միջին նորոգում (նորոգում)՝ ավտոմոբիլային ճանապարհների տրանսպորտային եւ գործառնական բնութագրերը վերականգնելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաեւ ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ, որոնց իրականացումը ազդեցություն չի ունենում ճանապարհի կառուցվածքային եւ այլ բնութագրերի հուսալիության եւ անվտանգության վրա.

ճանապարհների պահպանում՝ ավտոմոբիլային ճանապարհների, այդ թվում՝ ճանապարհի հողային պաստառի, արհեստական կառույցների, տրանսպորտային հանգույցների, կահավորանքի եւ ինժեներական շինությունների առկա տեխնիկական վիճակի պահպանման, դրա տեխնիկական վիճակի գնահատման աշխատանքների ամբողջություն, որոնք համապատասխանում են անվտանգ եւ անխափան երթեւեկության ապահովման պահանջներին.

ճանապարհային տեխնոլոգիական կապ՝ ավտոմոբիլային ճանապարհների կապի համակարգ, որը ապահովում է ավտոմոբիլային ճանապարհների եւ արհեստական կառույցների շահագործման, նախագծման եւ կառուցման աշխատանքների գործառնական կառավարումը, որի հիմնական նպատակն է օպերատիվ տեղեկատվություն ստանալ ավտոմոբիլային ճանապարհների եւ արհեստական կառույցների, դրանց առանձին տարրերի աշխատանքի վիճակի մասին: Ճանապարհային տեխնոլոգիական կապի համակարգի մեջ մտնում են ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառի վիճակի եւ հիդրոօդերեւութաբանական պայմանների վերահսկման տեխնիկական, ռադիոհեռախոսային կապի, երթեւեկության հոսքերի վերահսկման տեխնիկական միջոցները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գործոնների մշտադիտարկման կայանները եւ արտակարգ իրավիճակների կանչի կետերը.

ճանապարհային ակտիվների կառավարման համակարգ՝ ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառույցների եւ դրանց կառուցվածքային տարրերի

տվյալների հավաքագրման, կառավարման եւ վերլուծության համակարգ, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի պահպանման եւ զարգացման ծրագրերի կազմման եւ դրանց իրականացման բնականոն գործընթացը ապահովելու համար.

ճանապարհի տեխնիկական վիճակի գնահատում՝ ճանապարհների վերանորոգման միջոցառումների անհրաժեշտությունը որոշելու, ինչպես նաեւ ճանապարհի վիճակը հետագա շահագործման ընթացքում գնահատելու եւ կանխատեսելու նպատակով ճանապարհի եւ ճանապարհի արհեստական կառույցների կառուցվածքային տարրերի պարամետրերի եւ վիճակի, երթեւեկության հոսքերի բնութագրերի, տեղեկատվության ուսումնասիրություն, հավաքագրում եւ վերլուծություն.

ճանապարհային ենթակառուցվածք՝ ճանապարհային ֆիզիկական ակտիվների համակարգի ամբողջություն, որն ընդգրկում է ավտոմոբիլային ճանապարհի օտարման շերտը՝ իր մեջ ֆիզիկապես ներառված բոլոր տարրերով, արհեստական կառույցները, ճանապարհային կահավորանքը, ճանապարհային ծառայության շինությունները եւ ճանապարհային ինժեներական շինությունները,

ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարում՝ ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարելավմանն ուղղված գործողությունների ամբողջականություն, որը ներառում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության քաղաքականության իրականացումը, ճանապարհատրանսպորտային պատահարների եւ բնութագրերի, ինչպես նաեւ ~~ճանապարհներից օգտվողների~~ երթևեկության խոցելի խմբերի վերաբերյալ քանակական եւ պարբերական հետազոտությունների իրականացումը, ճանապարհների անվտանգության վիճակի հսկողությունը եւ բարելավումը, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը, ճանապարհային անվտանգության նպատակային և պարբերական հետազոտությունների իրականացումը, ճանապարհային անվտանգության ~~աուդիտորների վերապատրաստումը եւ որակավորումը~~ աուդիտի իրականացումը, ճանապարհային ցանցի անվտանգության ամբողջական գնահատման եւ անվտանգության մակարդակի գնահատման նպատակով հսկողության իրականացումը եւ ընթացիկ մշտադիտարկումը,

ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատում՝ ճանապարհային ցանցի անվտանգության ցուցանիշների համապատասխանության նկատմամբ նոր կառուցվող ճանապարհի անվտանգության ցուցանիշների կամ գործող ճանապարհային ցանցի անվտանգության ցուցանիշների էական փոփոխության ազդեցության համեմատական վերլուծություն,

ճանապարհային անվտանգության աուդիտ՝ ճանապարհի անվտանգության պահանջների համապատասխանության անկախ եւ օբյեկտիվ գնահատման գործընթաց, որը նախատեսված է ճանապարհային ենթակառուցվածքի

անվտանգությունն ու գործառնությունը (ֆունկցիոնալությունը) բարձրացնելու համար ~~նպատակով անցկացվող աուդիտ կամ աուդիտորական դիտարկում~~,

ճանապարհային անվտանգության վարկանիշ՝ գործող ճանապարհային ցանցում ընդգրված ճանապարհահատվածների անվտանգության չափանիշների դասակարգումն ըստ կարգերի

ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություն՝ ավտոմոբիլային ճանապարհների կամ դրանց հատվածների նպատակային հետազոտություն, որը պետք է բացահայտի ճանապարատրանսպորտային պատահարների առաջացման հնարավոր ռիսկը, նպաստող պայմանները, թերությունները եւ խնդիրները.

ճանապարհային անվտանգության պարբերական հետազոտություն՝ անվտանգության նկատառումներից ելնելով ճանապարհների կամ դրանց հատվածների անվտանգության համապատասխան մակարդակների ապահովման նպատակով պարբերաբար կատարվող հետազոտություն.

ճանապարհային երթեւեկության մասնակիցների խոցելի խումբ՝ ~~ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկության մասնակիցների խոցելի խումբ՝~~ հետիոտները, հեծանվորդները, երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձիք, ինչպես նաեւ շարժիչով աշխատող երկանիվ տրանսպորտային միջոցներից օգտվողները.

ճանապարհի վթարավտանգ հատվածներ՝ ավտոմոբիլային ճանապարհի վրա գտնվող վթարների կուտակման վայրեր կամ հատվածներ, որտեղ կենտրոնացած են եղել ճանապարհատրանսպորտային պատահարները, որոնք պատճառ են դարձել մարդկային զոհերի կամ վիրավորների.

ճանապահային անվտանգության տվյալների կառավարման համակարգ՝ ճանապատրանսպորտային պատահարների, ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով տուժած անձանց (զոհվածների եւ վիրավորների), ճանապարհային երթեւեկության բնագավառում վարչական իրավախախտումների, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհների տվյալների հաշվառման, պահպանման, վերլուծության, նույնականացման եւ մշտադիտարկման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ընդգրկում է ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների, ավտոմոբիլային ճանապարհների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարի ենթարկված տրանսպորտային միջոցների տվյալների եւ ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով անձանց առողջությանը վերաբերվող տվյալների շտեմարանները:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1. 6-րդ մասում «ապահովում են» բառերը փոխարինել «որոնք կարող են ապահովել» բառերով.

2. 8-րդ մասի «շրջանցները,» բառից հետո լրացնել «միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները իրար կապող ավտոմոբիլային ճանապարհները,» բառերը ~~եւ «,» կետադրական նշանը~~:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1. «ա», «դ» եւ «ե» կետերում «նորոգման ու պահպանման» բառերը փոխարինել «միջին նորոգման (նորոգման), պահպանման» բառերով.

2. «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ) իր իրավասության սահմաններում, սույն օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով կահավորանքին ներկայացվող պահանջներին համապատասխան, համաձայնություն է տալիս ճանապարհի առանձին տեղամասերում ճանապարհային կահավորանքի տեղադրման համար.»,

3. «է» կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4. լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ը-իե~~իդ~~» կետերով.

«ը) հսկողություն է իրականացնում իր տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց երթեւեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման, միջին նորոգման (նորոգման) ու պահպանման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունների պայմանագրերի կատարման նկատմամբ.

թ) իր իրավասության սահմաններում ընդունում է ճանապարհային ենթակառուցվածքի եւ ճանապարհային անվտանգության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.

ժ) մշակում եւ հաստատում է իր տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի եւ դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների կարգը.

ժա) մշակում է ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման կարգը.

ժբ) իրականացնում է իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարումը, ճանապարհների տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքագրումը, վերլուծությունը: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարման, տվյալների հավաքագրման եւ վերլուծության իրականացման կարգը հաստատում է պետական ճանապարհային մարմինը.

ժգ) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներդրումային ծրագրեր՝ «Պետություն-մասնավոր

գործընկերության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքին համապատասխան.

ժդ) իրականացնում է ճանապարհային անվտանգության աուդիտորների որակավորումը.

ժե) ապահովում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը՝ սույն օրենքի, ճանապարհային անվտանգության ստանդարտների, շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի եւ ճանապարհային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան,

ժզ) ուսումնասիրում եւ վերլուծում է ճանապարհային երթեւեկության մասնակիցների խոցելի խմբի ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բնագավառում ի հայտ եկած կարիքները, ինչպես նաեւ ճանապարհային անվտանգության բարձրացման նպատակով երթեւեկության տարբեր մասնակիցների խմբերի վարքագծի բարելավման ուղղությամբ այլ իրավասու մարմինների հետ համատեղ մշակում եւ իրականացնում է կրթական եւ իրազեկման արշավներ,

ժէ) իրականացնում է ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը.

ժը) իրականացնում է ճանապարհային անվտանգության նպատակային և պարբերական հետազոտություններ ~~ընթացիկ մշտադիտարկում~~ եւ զննություն, եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում ճանապարհային ցանցի անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ,

ժթ) ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ապահովման նպատակով կազմում է ճանապարհային անվտանգության ռիսկերի վրա հիմնված առաջնահերթ գործողությունների տարեկան ծրագիր եւ իր իրավասության սահմաններում իրականացնում է ռիսկերի կրճատման միջոցառումներ,

ի) իրականացնում է թունելների անվտանգության գնահատումը, մշտադիտարկումը եւ այդ պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը,

իա) թունելների անվտանգության ապահովման նպատակով մշակում է վթարների արագ արձագանքման միջոցառումների ծրագիր,

իբ) սահմանում է թունելի վթարային իրավիճակի դեպքում դրանց շահագործումը անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու կարգը,

իգ) ապահովում է թունելների անվտանգության պարբերական փորձարկման եւ զննության իրականացումը, եւ դրանց արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն, ինչպես

նաեւ առաջարկություններ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ:

իդ) ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշների հավաքագրման, դրանց հետեւանքով տուժած (մահացած եւ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացած) անձանց վերաբերյալ տվյալները հաշվառող, ինչպես նաեւ դրանց հաշվառման վիճակագրական տվյալների վերլուծությունն իրականացնող պետական շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ իրականացնում է ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկ եւ վերլուծություն: Ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների հավաքագրման, դրանց հետեւանքով կրած վնասի, միջին հանրային ծախսերի հաշվարկման եւ վերլուծության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

իե) սահմանում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները:»:

Հոդված 5. Օրենքի ամբողջ տեքստում «դրանց տնօրինողների» բառերը փոխարինել «ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողների» բառերով:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «ճանապարհների կառուցման» բառերից հետո լրացնել «, վերակառուցման» բառը:

Հոդված 7. Օրենքի 2-րդ գլխի, 7-րդ, 8-րդ եւ 16-րդ հոդվածների վերնագրերում, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ, 16.1-րդ եւ 19-րդ հոդվածներում, 13-րդ հոդվածի 3-րդ մասում, 15-րդ մասի «գ» եւ 16-րդ մասի «զ» կետերում «նորոգման» բառը եւ դրա հոլովումները փոխարինել «միջին նորոգման (նորոգման)» բառերով եւ դրանց հոլովումներով:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով.

«5. Միջազգային ճանապարհային ցանցի մաս հանդիսացող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց մաս հանդիսացող թունելների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 7-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «իրականացվում են ըստ գործող շինարարական նորմերի» բառերը փոխարինել «իրականացվում են նորմատիվ իրավական եւ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն» բառերով.

2. 3-րդ մասում «առնվազն 18 ամիս սպասարկման ժամկետով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված երաշխիքային ժամկետներում» բառերով.

3. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով.

«8. Ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ տարածքները ենթակա են օտարման «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման ենթակա ճանապարհաշինական ծրագրերի իրականացման դեպքում՝ ծրագրերի մշակման եւ նախապատրաստման փուլերում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է ~~սահմանել եւ~~ կիրառել ենթակառուցվածքային ծրագրերը ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների սոցիալական երաշխիքների քաղաքականությունը եւ դրա պահանջներին համապատասխան սահմանել տարաբնակեցման և փոխհատուցման սկզբունքները եւ շրջանակը, ինչպես նաեւ հողերի օտարման եւ տարաբնակեցման ծրագիրը:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1.1-ին մասի «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ) հեծանվորդների համար՝ մայթերով, կողնակներով եւ հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով, հեծանվորդների համար առանձնացված գոտիներով, իսկ դրանց բացակայության դեպքում երթեւեկելի մասի աջ եզրով:».

2. 6-րդ մասի «ա» կետում «ասֆալտբետոնե» բառից հետո լրացնել «, ցեմենտբետոնե» բառը, «ե» կետում «կողնակների» բառից առաջ լրացնել «երթեւեկելի մասի, բաժանիչ գոտու եւ» բառերը, իսկ «ը» կետում «նախագծումը» բառից հետո լրացնել «, ~~կառուցումը,~~ շինարարությունը եւ շահագործումը» բառերը:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները ոռոգման ~~ոռգման~~ առուներով, էլեկտրոնային հաղորդակցության եւ էլեկտրականության գծերով, խողովակաշարերով եւ այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով եւ երկաթուղագծերով հատման, ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտում ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողների հետ դրանց տեղադրման եւ վերատեղադրման համաձայնեցման կարգը, նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար նախատեսված դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցման, ինչպես նաեւ դրանք հեռահաղորդակցության օպերատորներին վարձակալությամբ տրամադրման կարգը եւ պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

2. 3-րդ մասում «դրանց սեփականատիրոջ հաշվին» բառերը փոխարինել «հաղորդակցուղու սեփականատիրոջ հաշվին, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ» բառերով.

3. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-8-րդ մասերով.

«5. Նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծերում ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցումը իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

6. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցումը իրականացվում է նոր կառուցվող եւ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Գնումների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի հիմքով հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար կառուցված դիտահորերը, խրամուղիները, հենասյուները կամ դրանց հատվածները հեռահաղորդակցության օպերատորներին տրամադրվում են վարձակալությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հետ կնքելով վարձակալության պայմանագիր:

8. Կառուցված եւ վերակառուցված ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների անցկացման համար նախատեսված դիտահորերի, խրամուղիների, հենասյուների առկայության դեպքում հեռահաղորդակցության օպերատորները հաղորդակցուղիները պետք է անցկանցնեն միայն դրանց միջով:»:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել.

2. 2-րդ մասի «ա» կետում «1-ին կարգի» բառերը փոխարինել «միջպետական նշանակության ավտոմոբիլային» բառերով, «բ» կետում «2-րդ եւ 3-րդ կարգի» բառերը փոխարինել «հանրապետական նշանակության ավտոմոբիլային» բառերով, իսկ «գ» կետում «4-րդ կարգի» բառերը փոխարինել «մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային», բառերով

3. 6-րդ մասում՝

ա. «պաշտպանական գոտիներում» բառերից հետո լրացնել «եւ բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում» բառերը.

բ. «ա» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա~~.~~) կառուցել, վերակառուցել շենքեր եւ շինություններ, այդ թվում ինժեներական ենթակառուցվածքների հաղորդակցուղիներ, կատարել ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազոտություններ, արդյունահանման աշխատանքներ.».

գ. «դ» կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

դ. լրացնել նոր «ե» ենթակետ հետեւյալ բովանդակությամբ.

«ե) կառուցել ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր մուտքեր եւ ելքեր:».

4. 7-րդ մասում «կառուցվածքները» բառից հետո լրացնել «՝ գործող շինարարական նորմերի պահանջներին համապատասխան» բառերը.

~~3~~5. 8-րդ մասում «ցանկապատվի տեսանելի պարսպով եւ կահավորվի համապատասխան ճանապարհային նշաններով» բառերը փոխարինել «կահավորվի համապատասխան պաշտպանիչ, խոչընդոտող, պարսպող հարմարանքներով եւ ճանապարհային նշաններով» բառերով:

~~4~~6. 11-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11. Անմիջական ճանապարհի հողային պաստառի վրայով կամ ճանապարհի օդային տարածքով, օտարման գոտիով ճանապարհային տեխնոլոգիական կապից եւ լուսավորումից բացի որեւէ այլ հաղորդակցուղու տեղադրումն արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բացառիկ դեպքերի:».

~~5~~7. 12-րդ մասում «կապի» բառը փոխարինել «էլեկտրոնային հաղորդակցության» բառերով.

~~6~~8. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 15.1-15.3 մասերով.

«15.1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային եւ ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման, վիճակի գնահատման, Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների եւ թունելների պահպանման աշխատանքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների եւ թունելների պահպանման մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական

պահանջները եւ պահպանման աշխատանքների ինքնարժեքի հաշվարկման մեթոդաբանությունը, կատարված աշխատանքների ընդունման կարգը, ինչպես նաեւ բնական աղետների կամ արտակարգ իրավիճակների դեպքում՝ հրատապ աշխատանքների իրականացման, գնահատման եւ աշխատանքների ընդունման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

15.2. Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման, ճանապարհների վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման) եւ պահպանության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման հեռանկարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցվող օբյեկտների ցանկը, նկարագիրը, առանձնահատկությունները եւ դրանց ներկայացվող պահանջները:

15.3. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտիներում կառուցապատման արդյունքում անհրաժեշտ ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի տեղադրումը իրականացվում է կառուցապատողի միջոցների հաշվին՝ կառուցապատվող օբյեկտի մոտով անցնող ճանապարհահատվածների երթեւեկության կազմակերպման գծապատկերները կամ երթեւեկության կազմակերպման սխեմաները նախապես համաձայնեցնելով պետական ճանապարհային մարմնի եւ երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ:»:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասում «հանրապետության քաղաքային համայնքներում նախատեսվող օբյեկտների համար պետական ճանապարհային մարմին են ներկայացնում քաղաքապետը, իսկ գյուղական համայնքներում կամ դրանցից դուրս՝ մարզպետը» բառերը փոխարինել «պետական ճանապարհային մարմին է ներկայացնում համապատասխան համայնքի ղեկավարը» բառերով:

2. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ավտոմոբիլային ճանապարհի պաշտպանական գոտում, ինչպես նաեւ բնակավայրի միջով անցնող հատվածներում շենքերի եւ շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային եւ գործառնական նշանակության փոփոխությունը, ինչպես նաեւ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի օտարումները, իրականացվում են օրենքով սահմանված կարգով: Ընդ որում՝ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի օտարման առաջարկությունները նախապես համաձայնեցվում են պետական ճանապարհային մարմնի եւ երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի հետ:»:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 19.1. Ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը եւ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատումը

1. Ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը իրականացնում է պետական ճանապարհային մարմինը: Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման արդյունքների հիման վրա իրականացվում են ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություններ՝ ճանապարհների վթարավտանգ հատվածների հայտնաբերման և բարելավման աշխատանքներ կատարելու նպատակով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները ենթակա են ճանապարհային անվտանգության ազդեցության պարտադիր գնահատման:

3. Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման գործընթացում պետք է հաշվի առնվեն ճանապարհային երթեւեկության խոցելի խմբերի ճանապարհից անվտանգ օգտվելու իրավունքները:

4. Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման, ճանապարհային ցանցի անվտանգության տվյալների կառավարման եւ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման չափանիշների սահմանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Պետական ճանապարհային մարմինը պետք է հասանելիություն ունենա երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման էլեկտրոնային համակարգի տվյալներին՝ բացառությամբ անձնական տվյալների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանման ենթական տվյալների:

6. Ճանապարհային անվտանգության տվյալների կառավարման համակարգի տվյալների հաշվառման, վերլուծության, մշտադիտարկման եւ գնահատման միջոցով իրականացվում են ճանապարհային անվտանգության քաղաքականության մշակման եւ բարելավմանն ուղղված միջոցառումներ:

7. Ճանապարային անվտանգության տվյալների կառավարման համակարգի ձեւավորման, վարման, տվյալների ինտեգրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությանբ կառավարությունը:

Հոդված 19.2. Ճանապարհային անվտանգության աուդիտը

1. Ճանապարհային անվտանգության աուդիտը հանդիսանում է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման գործընթացի անբաժանելի մասը:

2. Ճանապարհային անվտանգության աուդիտն իրականացվում է ճանապարհաշինարարական ծրագրերի իրականացման բոլոր փուլերում՝ ճանապարհի նախագծումից մինչեւ ճանապարհի սպասարկման մեկ տարի երաշխիքային ժամկետը:

3. Ճանապարհային անվտանգության աուդիտորը ենթակա է պարտադիր որակավորման: Որակավորումը իրականացնում եւ վկայականը տրամադրում է պետական ճանապարհային մարմինը:

4. Ճանապարհային անվտանգության աուդիտոր կարող է լինել այն անձը, որը.

1) ունի ճանապարհների, կամուրջների, թունելների նախագծման, կամ ճանապարհային անվտանգության, կամ ճանապարհային երթեւեկության կազմակերպման ինժեների (ճարտարագետի) առնվազն հինգ տարվա փորձ,

2) պետական ճանապարհային մարմնի կողմից ստացել է որակավորման վկայական:

5. Ճանապարհային անվտանգության աուդիտ կարող է իրականացնել ֆիզիկական անձը կամ կազմակերպությունը:

6. Եթե ճանապարհային անվտանգության աուդիտն իրականացվում է կազմակերպության կողմից, ապա այդ կազմակերպության առնվազն երկու անդամ պետք է ունենան սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ որակավորման վկայականը:

7. Ճանապարհային անվտանգության աուդիտորը չի կարող ներգրավված լինել ճանապարհային անվտանգության աուդիտի ենթակա ավտոմոբիլային ճանապարհի նախագծման, հեղինակային եւ, տեխնիկական հսկողության, ինչպես նաեւ շինարարության իրականացման գործընթացներում:

8. Ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացման կարգը, ճանապարհային անվտանգության աուդիտորի իրավունքները եւ պարտականությունները, ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորման պահանջները, վերապատրաստման իրականացման կարգը, որակավորման վկայականի տրամադրման կամ մերժման հիմքերը եւ ժամկետները,

եւ լրացուցիչ աուդիտի նշանակման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19.3. Թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջները

1. Ճանապարհային երթեւեկության մասնակիցների անվտանգության ապահովման համար պետական ճանապարհային մարմինը՝ քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ, մշակում է ~~սահմանում է~~ թունելների անվտանգության նվազագույն պահանջները, որոնք պետք է ուղղված լինեն մարդկանց կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի եւ թունելների կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների համար հնարավոր վտանգ ներկայացնող դեպքերի կանխարգելմանը, ինչպես նաեւ պատահարների դեպքում անվտանգության ապահովմանը:

2. Թունելի անվտանգության նվազագույն պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է պետական ճանապարհային մարմինը, իսկ թունելների անվտանգության միջոցառումներն ապահովում է թունելի պահպանումն իրականացնող կապալառու կազմակերպությունը:

3. Պետական ճանապարահային մարմինը իրավասու է կասեցնելու կամ սահմանափակելու թունելների շահագործումը, եթե դրանք չեն բավարարում անվտանգության պահանջներին: Թունելների անվտանգության նվազագույն պահանջների ապահովման, թունելների անվտանգության կանխարգելման եւ պաշտպանական միջոցառումներ սահմանելու կարգը հաստատում է պետական ճանապարհային մարմինը:

4. Կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ շահագործման փուլերում գտնվող թունելների անվտանգության պահանջների պահպանման համար պատասխանատու է «Գնումների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված կարգով ընտրված տվյալ թունելի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ շահագործման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունը:

5. Թունելներով երթեւեկող տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ թունելները շահագործող անձնակազմի անվտանգությունն ապահովելու նպատակով՝ կապալառու կազմակերպությունը յուրաքանչյուր թունելի համար նշանակում է թունելի անվտանգության գծով մեկ պատասխանատուի՝ նախապես համաձայնեցնելով պետական ճանապարհային մարմնի հետ:

6. Թունելների անվտանգության գծով պատասխանատուի որակավորման, նշանակման եւ պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Թունելների անվտանգության պարբերական փորձարկման եւ զննության իրականացումը, ինչպես նաեւ թունելներում տեղի ունեցած վթարների վերաբերյալ

հաշվետվության ձեւը եւ ներկայացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Թունելների անվտանգության նվազագույն պահանջների համապատասխանությունը ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինը իրականացնում է պարբերական զննում:

9. Թունելի անվտանգության համապատասխան մակարդակները պահպանելու նպատակով իրականացվող երկու հաջորդական զննումների միջեւ ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի վեց տարին:»:

Հոդված 15. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերով.

«4. Սույն օրենքի 19.2-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված դրույթներն ուժի մեջ են մտնում՝ միջպետական նշանակության ճանապարհների մասով՝ 2025~~5~~6 թվականի ~~հուլիսի~~ հունվարի 1-ից, հանրապետական նշանակության ճանապարհների մասով՝ 2026~~6~~7 թվականի հունվարի 1-ից, մարզային (տեղական) նշանակության ճանապարհների մասով՝ 2027~~7~~8 թվականի հունվարի 1-ից, իսկ 19.3-րդ հոդվածով սահմանված դրույթների մասով նոր կառուցվող ճանապարհային թունելների համար՝ 2024 թվականի հուլիսի 1-ից:

5. Մինչեւ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը կառուցված եւ շահագործման մեջ գտնվող միջազգային ճանապարհային ցանցի մաս հանդիսացող թունելների անվտանգության պահանջները ոչ ուշ քան մինչեւ 2027 թվականի հունվարի 1-ը պետք է համապատասխանեցվեն սույն օրենքի 19.3-րդ հոդվածով սահմանված դրույթներին:

6. Սույն օրենքի 19.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանապարհային անվտանգության ազդեցության առաջին գնահատումը պետք է իրականացվի մինչեւ 2029 թվականի հունվարի 1-ը:»:

Հոդված 16. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժ», «ժբ», «իբ», ~~եւ~~ «իդ» և «իե» կետերով, 8-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածներով եւ 14-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 4-րդ մասով եւ 19.3 հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանչորս ամսյա ժամկետում, 14-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսյա ժամկետում, իսկ 14-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 7-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ

իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսունվեց ամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-769-30.01.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Վերնագիր, 1-ին հոդված և Նախագծի ամբողջ տեքստ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը՝ առաջարկում ենք Նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը: Նույն առաջարկությունը վերաբարելի է նաեւ Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին, ինչպես նաեւ Նախագծի ողջ տեքստում «օրենք» բառի հոլովումներից առաջ «Հայաստանի Հանրապետության» բառերին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «ճանապարհային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հիմնանորոգում» հասկացության մեջ առաջարկում ենք «եւ (կամ)» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի դրույթները:		
3.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում «ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարում» հասկացությունը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք լրամշակել այն՝ «ճանապարհներից օգտվողների» բառերը փոխարինելով «երթևեկության խոցելի խմբերի» բառերով, «նպատակային» բառից հետո լրացնել «և պարբերական» բառերը, իսկ «աուդիտորների վերապատրաստումը և որակավորումը» բառերը փոխարինել «աուդիտի իրականացումը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 4-րդ մաս	Առաջարկում ենք Նախագծի «ճանապարհների անվտանգության աուդիտ» հասկացությունը խմբագրել՝ այն համապատասխանեցնելով ԵՄ 2008/96/ԵՀ «Ճանապարհային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ենթակառուցվածքի անվտանգության կառավարում» դիրեկտիվով սահմանված «ճանապարհների անվտանգության աուդիտ» հասկացության բովանդակությանը, որի արդյունքում վերոնշյալ հասկացության մեջ «նպատակով անցկացվող աուդիտ կամ աուդիտորական դիտարկում» բառերը առաջարկում ենք փոխարինել «գործընթաց, որը նախատեսված է ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգությունն ու գործառնությունը (ֆունկցիոնալությունը) բարձրացնելու համար» բառերով:		
5.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվող «ճանապարհների երթեւեկության մասնակիցների խոցելի խումբ» հասկացության սահմանման մեջ նշված «ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկության մասնակիցների խոցելի խումբ» բառերն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջարկում ենք հանել:		
6.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «շրջանցները» բառից հետո լրացնել «,» կետադրական նշանը և հանել «եւ «,» կետադրական նշանը» բառերը՝ ինկորպորացման հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 4-րդ հոդվածի «գ» կետում պետական ճանապարհային մարմնի կողմից համաձայնության եղանակը հստակցնելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի «գ» կետը խմբագրել՝ հղում տալով Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ճանապարհային կահավորանքի կիրառման և տեղակայման կանոններում (ՀՀ կառավարության 26.10.2006թ. թիվ 1699-Ն որոշում) կսահմանվի նաև ճանապարհի առանձին տեղամասերում ճանապարհային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կահավորանքի տեղադրման կանոնները: Ըստ այդմ նախագծի 4-րդ հոդվածի «գ» կետում «սահմաններում» բառերից հետո լրացվել է «, սույն օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով կահավորանքին ներկայացվող պահանջներին համապատասխան,» բառերը:		
8.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում «իդ» համարակալումը առաջակում ենք փոխարինել «իե» համարակալմամբ, հաշվի առնելով, որ նախագիծը լրացվել է նոր «իե» կետով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժը» կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված են «Ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություն» և «Ճանապարհ ային անվտանգության պարբերական հետազոտություն» հասկացությունն երը, մինչդեռ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժը» կետով նախատեսված է, որ «Պետական ճանապարհային մարմինը իրականացնում է ճանապարհային ցանցի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			անվտանգության նպատակային և պարբերական հետազոտություններ և զննություն, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում ճանապարհային ցանցի անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ:» Հետագա տարընկալումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք կիրառել միօրինակ ձևակերպումներ: Ըստ այդմ Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժը» կետից առաջարկում ենք հանել «ցանցի» բառը:		
10.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ժը» կետ	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 4-րդ հոդվածի «ժը» կետը առաջարկում ենք հստակեցնել՝ «ընթացիկ մշտադիտարկում» բառերը փոխարինելով «նպատակային և պարբերական հետազոտություններ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 4-րդ հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր կետ՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սահմանելով, որ պետական ճանապարհային մարմինը սահմանում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները սահմանելու իրավասությունը:		
12.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «ճանապարհների կառուցման» բառերից հետո լրացնել «, վերակառուցման» բառը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով «, վերակառուցման» բառը լրացնել նաեւ Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրում եւս: Ըստ այդմ նախագծով առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածում «1-ին մասում» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «վերնագրում և» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 9-րդ հոդվածով 3-րդ մասով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող նոր 8-րդ մասը առաջակում ենք լրամշակել՝ հստակեցնելով, որ միջազգային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կազմակերպությունների կողմից ֆինանսավորման ենթակա ճանապարհաշինական ծրագրերի իրականացման դեպքում՝ ծրագրերի մշակման եւ նախապատրաստման փուլերում, Կառավարությունն ենթակառուցվածքային ծրագրերը ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների սոցիալական երաշխիքների քաղաքականություն կիրառելու դեպքում դրա պահանջներին համապատասխան սահմանի նաև տարաբնակեցման և փոխհատուցման սկզբունքները եւ շրջանակը: Ըստ այդմ նախագծում «իրավասու է» բառերից հետո առաջարկում ենք հանել «սահմանել և» բառերը, «քաղաքականությունը եւ» բառերից հետո լրացնել «դրա պահանջներին համապատասխան» բառերը, իսկ «տարաբնակեցման» բառից հետո լրացնել «և փոխհատուցման» բառերը:		
14.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածի	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		2-րդ մաս	մասով նախատեսվում է Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի «ե» կետում «կողնակների» բառից առաջ լրացնել «երթեւեկելի մասի, բաժանիչ գոտու եւ» բառերը: Հարկ է նշել, որ Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի «ե» կետում նշված արգելքը հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 150.6-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության նյութական հիմքը: Հետեւաբար Օրենսգրքի 150.6-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել համապատասխան լրացում՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասում, բաժանիչ գոտում ապրանքներ վաճառելու համար սահմանելով պատասխանատվություն: Ըստ այդմ Օրենսգրքի համապատասխան հոդվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու նպատակով ներկայումս մշակվում է համապատասխան նախագիծ, որն առաջիկայում Օրենսգրքի փոփոխությունների նախագծի փաթեթը ՀՀ կառավարության		

			սահմանված կարգով կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:		
15.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի «ը» կետում «նախագծումը» բառից հետո «, կառուցումը, շինարարությունը եւ շահագործումը» բառերը լրացնելու կապակցությամբ նշենք, որ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքի 1-ին հոդվածի նոր խմբագրությամբ շարադրված 1-ին մասում առկա է «շինարարության (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման)» ձեւակերպումը, ինչից ակնհայտ է, որ «կառուցում» հասկացությունը կլանվում է «շինարարություն» հասկացության մեջ, հետեւաբար քննարկվող նորմում այս երկու հասկացությունները որպես իրարից անկախ հասկացութուններ կիրառելը կարող է առաջացնել իրավական շփոթ եւ ունի շտկման կարիք: Ըստ այդմ նախագծով առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «կառուցումը,» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

16.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի «ը» կետում «նախագծումը» բառից հետո «, շինարարությունը եւ շահագործումը» բառերը լրացնելու արդյունքում անհրաժեշտություն է առաջանում համապատասխան լրացում կատարել նաև Օրենսգրքի 150.7-րդ հոդվածում: Ըստ այդմ Օրենսգրքի 150.7-րդ հոդվածում լրացում կատարելու նպատակով ներկայումս մշակվում է համապատասխան նախագիծ, որն առաջիկայում Օրենսգրքի փոփոխությունների նախագծի փաթեթը ՀՀ կառավարության սահմանված կարգով կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	ՀՀ կառավարություն	11-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի «ռոգման» բառն առաջարկում ենք փոխարինել «ոռոգման» բառով: Ըստ այդմ նախագծով առաջակում ենք բառը ուղղել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

18.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում հակասություն է առաջանում Օրենսգրքի հետ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի 150.10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պատասխանատվության նյութական հիմքը Օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասն է: Ուստի նշված փոփոխությունների արդյունքում առաջարկվում ենք համապատասխան լրացում կատարել Օրենսգրքի 150.10-րդ հոդվածի 3-րդ մասում: Ըստ այդմ Օրենսգրքի 150. 10-րդ հոդվածում լրացում կատարելու նպատակով ներկայումս մշակվում է համապատասխան նախագիծ, որն առաջիկայում Օրենսգրքի փոփոխությունների նախագծի փաթեթը ՀՀ կառավարության սահմանված կարգով կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
19.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 12-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ *«4. 7-րդ մասում «կառուցվածքները»*	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառից հետո լրացնել «՝ գործող շինարարական նորմերի պահանջներին համապատասխան» բառերը. »: Նշված առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվող կարգավորումների համաձայն՝ ճանապարհների օտարման շերտի սահմաններում օրենքով սահմանված կարգով աշխատանքներ կատարող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք պարտավոր են աշխատանքները ավարտելուց հետո անհապաղ վերականգնել աշխատանքների կատարման հետևանքով վնասված ճանապարհի հողապաստառը, ճանապարհային կահավորանքը, տեխնոլոգիական կապն ու կանաչ տնկիները, հավաքել և հեռացնել ավելորդ հողը, աղբը, չօգտագործված նյութերն ու կառուցվածքները: Սակայն հաճախ վերջիններս չեն պահպանում գործող շինարարական նորմերի պահանջները: Ըստ այդմ		

			առաջարկում ենք վերանայել նաև 12-րդ հոդվածի համարակալումը:		
20.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող բոլոր հոդվածների հերթական համարից հետո առաջարկում ենք լրացնել միջակետ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը, այն է. «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով»: Ըստ այդմ նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19. 1-ին, 19. 2-րդ և 19. 3-րդ հոդվածների հերթական համարից հետո առաջարկում ենք միջակետ դնել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
21.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվում են «ճանապարհային անվտանգության վարկանիշ», «ճանապարհային անվտանգության նպատակային հետազոտություն», «ճանապարհի վթարավտանգ հատվածներ» հասկացությունները: Առաջարկում ենք Նախագիծը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին (այսինքն՝ եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:): Ըստ այդմ նախագծի նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 19. 1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք լրացնել նոր նախադասություն, իսկ 4-րդ մասում «գնահատման» բառից հետո առաջարկում ենք լրացնել «և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման» բառերը, որտեղ օգտագործվում են հիշյալ հասկացությունները:		
22.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-	Ընդունվել է:	Ընդունվել է:

			րդ մասի պահանջով եւ նույն միտքն արտահայլտելիս կիրառել միեւնույն բառերը: Նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19.1-ին հոդվածի 5-րդ մասում շարադրված է «ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման էլեկտրոնային համակարգ» ձեւակերպումը որը նպատակ ունի ապահովել ՆԳՆ Ոստիկանության Ճանապարհային անվտանգության տվյալների կառավարման համակարգին պետական ճանապարհային մարմնին (ՏԿԵՆ) հասանելության տրամադրումը: Այս կապակցությամբ Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող «ճանապահային անվտանգության տվյալների կառավարման համակարգ» հասկացության հետ «ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման էլեկտրոնային համակարգ» ձևակերպումը չնույնականցնելու համար նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19.1-ին հոդվածի 5-րդ մասում առաջարկում ենք լրացնել «երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի» բառերը:		

			Ըստ այդմ նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19.1-ին հոդվածի 5-րդ մասում «պետք է հասանելիություն ունենա» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի» բառերը:		
23.	ՀՀ կառավարություն	14-րդ և 4-րդ հոդվածներ	Նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ պետական ճանապարհային մարմինը՝ քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ, սահմանում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ լրամշակվող նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 4-րդ հոդվածում լրացվող «իե» կետի համաձայն՝ պետական ճանապարհային մարմինը սահմանում է թունելների անվտանգության նվազագույն պահանջները, ուստի առաջարկում ենք նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող 19. 3-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածում «սահմանում» բառը փոխարինել «մշակել» բառով, որի համաձայն պատական կառավարման մարմինը քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ կմշակի թունելների անվտանգության նվազագույն պահանջները, որը Օրենքի 4-րդ հոդվածում լրացվող «իե» կետի համաձայն կսահմանվի պետական ճանապարհային մարմնի կողմից:		
24.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքի 21-րդ հոդվածը լրացվող 4-րդ մասով Աուդիտի իրականացման ժամկետները փոփոխել՝ պայմանավորված Նախագծի 14-րդ հոդվածով Օրենքի նոր 19.2 հոդվածով նախատեսվող Ճանապարհային անվտանգության աուդիտի կարգի մշակման ժամանակատարությունից: Ըստ այդմ նախագծի 15-րդ հոդվածով Օրենքի 21-րդ հոդվածը լրացվող 4-րդ մասում առաջարկում ենք «2025» թիվը փոխարինել է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«2026» թվով, «հուլիսի» բառը՝ «հունվարի» բառով, «2026» թիվը՝ «2027» թվով, իսկ «2027» թիվը՝ «2028» թվով:		
25.	ՀՀ կառավարություն	16-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «Սույն օրենքի 4-րդ հոդվածի «ժ» կետերով» ձևակերպման մեջ հղումն, ինչպես նաև հղումների անհամապատասխանությունները առաջարկում ենք շտկել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը: Ըստ այդմ նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասում «4-րդ հոդվածի» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «4-րդ մասով լրացվող» բառերը, «իբ» բառից հետո ստորակետ դնել և հանել “և” շաղկապը, և «իդ» բառից հետո լրացնել «և «իե»» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: